

## Անկախ աուդիտորական եզրակացություն

### «Շեն Հոլդինգ» ՓԲԸ -ի բաժնետերերին,

Մեր կողմից իրականացվել է «Շեն Հոլդինգ» ՓԲԸ (Ընկերություն) կից ներկայացված ֆինանսական հաշվետվությունների աուդիտը, ընդ որում այդ հաշվետվությունները ներառում են 2013թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը, նույն ամսաթվին ավարտված տարվա համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունը, սեփական կապիտալում փոփոխությունների և դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունները, ինչպես նաև հաշվապահական հաշվառման քաղաքականության ամփոփ նկարագիրը և այլ պարզաբանող ծանոթագրություններ:

### *Ֆինանսական հաշվետվությունների համար տնօրինության պատասխանատվություն*

Ընկերության տնօրինությունը պատասխանատու է սույն ֆինանսական հաշվետվությունները Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներին համապատասխան կազմելու և արժանահավատորեն ներկայացնելու համար: Այս պատասխանատվությունը ներառում է՝ խաբեության կամ սխալի հետևանքով առաջացած էական խեղաթյուրումներից զերծ ֆինանսական հաշվետվություններ կազմելու և արժանահավատորեն ներկայացնելու անհրաժեշտ ներքին վերահսկողության համակարգի սահմանում, կիրառում և պահպանում, հաշվապահական հաշվառման համապատասխան քաղաքականության ընտրություն և կիրառում, ինչպես նաև տվյալ հանգամանքներում ողջամիտ հաշվապահական գնահատումների կատարում:

### *Աուդիտորի պատասխանատվություն*

Մեր պարտականությունն է անցկացված աուդիտի արդյունքում կարծիք արտահայտել ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ: Մենք աուդիտն անցկացրեցինք Աուդիտի միջազգային ստանդարտներին համապատասխան: Այդ ստանդարտներով պահանջվում է, որ մենք պահպանենք մասնագիտական վարքագծի կանոնները, աուդիտը պլանավորենք ու իրականացնենք այնպես, որպեսզի ձեռք բերենք ողջամիտ հավաստիացում՝ ֆինանսական հաշվետվությունների՝ էական խեղաթյուրումներից զերծ լինելու վերաբերյալ:

Աուդիտորական աշխատանքները ներառում են ֆինանսական հաշվետվություններում ներկայացված գումարների և բացահայտումների վերաբերյալ աուդիտորական ապացույցներ ձեռք բերելու նպատակով ընթացակարգերի իրականացում: Ընթացակարգերի ընտրությունը հիմնված է աուդիտորի դատողության վրա, ներառյալ խաբեության կամ սխալի հետևանքով ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրման ռիսկի գնահատումը: Այս ռիսկերը գնահատելիս աուդիտորն ուսումնասիրում է Ընկերության ֆինանսական հաշվետվությունները կազմելու և արժանահավատորեն ներկայացնելու անհրաժեշտ ներքին վերահսկողության համակարգը՝ տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր ընտրելու, բայց ոչ Ընկերության ներքին վերահսկողության համակարգի արդյունավետության մասին կարծիք արտահայտելու նպատակով:

Առողիտը ներառում է կիրառվող հաշվապահական հաշվառման քաղաքականության, տնօրինության կողմից կատարած հաշվապահական գնահատումների, ինչպես նաև ֆինանսական հաշվետվությունների ներկայացման գնահատում:

Մեր համոզմամբ՝ ձեռք բերված առողիտորական ապացույցները բավարար հիմք են հանդիսանում մեր կարծիքն արտահայտելու համար:

### *Կարծիք*


Մեր կարծիքով ֆինանսական հաշվետվությունները տալիս են «Շեն Հոլդինգ» ՓԲԸ-ի՝ 2013թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի և նույն ամսաթվին ավարտված տարվա ֆինանսական արդյունքների ու դրամական հոսքերի ճշմարիտ և իրական պատկերը՝ համաձայն Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների:

29 ապրիլի 2014թ.

Անիկ Մարտիրոսյան

Տնօրեն-Բաժնետեր

Սիլվա Ղազարյան  
Առողիտոր-բաժնետեր



## Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն


Հազար դրամ		2013թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2012թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
	Ծանոթ.		
<b>Ակտիվներ</b>			
<i>Ոչ ընթացիկ ակտիվներ</i>			
Հիմնական միջոցներ	5	12,030,322	11,168,222
Ոչ նյութական ակտիվներ		12,308	10,554
Բաժնեմասն-ն մեթոդով հաշվառվող ներդրումներ	6	1,355,181	1,355,181
Տրամադրված փոխառություններ	7	107,888	107,281
Տրված կանխավճարներ		5,182	31,033
Գույվիլ	8	414,670	414,670
		<u>13,925,551</u>	<u>13,086,941</u>
<i>Ընթացիկ ակտիվներ</i>			
Պաշարներ	9	2,045,012	1,866,574
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	10	1,138,326	826,470
Տրված փոխառություններ	7	153,518	70
Դրամական միջոցներ	11	41,597	107,781
		<u>3,378,453</u>	<u>2,800,895</u>
		<u>17,304,004</u>	<u>15,887,836</u>
<b>Ընդամենը ակտիվներ</b>			
<b>Սեփական կապիտալ և պարտավորություններ</b>			
<i>Կապիտալ և պահուստներ</i>			
Կանոնադրական կապիտալ	12	3,350,000	2,298,330
Էմիսիոն եկամուտ	12	433,833	433,833
Պահուստային կապիտալ	12	225,000	225,000
Կուտակված շահույթ		3,282,928	2,984,143
		<u>7,291,761</u>	<u>5,941,306</u>
<i>Ոչ ընթացիկ պարտավորություններ</i>			
Վարկեր, փոխառություններ և պարտատուներ	13	5,309,480	4,577,596
Հետաձգված հարկային պարտավորություն	14	772,754	876,221
		<u>6,082,234</u>	<u>5,453,817</u>
<i>Ընթացիկ պարտավորություններ</i>			
Վարկեր և փոխառություններ	13	2,120,708	3,099,951
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	15	1,791,753	1,389,885
Շահութահարկի գծով պարտավորություն		17,548	2,877
		<u>3,930,009</u>	<u>4,492,713</u>
Ընդամենը սեփական կապիտալ և պարտավորություններ		<u>17,304,004</u>	<u>15,887,836</u>

Ֆինանսական հաշվետվությունները հաստատվել են 2014թ. ապրիլի 29-ին՝

Գործադիր տնօրեն  
Պատվավոր նախագահ

Գլխավոր հաշվապահ  
Սերգեյ Սահակյան

Ֆինանսական հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասերի հետ մեկտեղ և համադրվի հետևյալ հոդվածների հետ՝



*(Handwritten signature)*